

<<<< ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆՆ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028ԹԹ.

1. Հաստատության գործունեությունը

1.1 Ինչ կրթական կարիքներ է բավարարելու

Ներկա իրավիճակում կրթության փոփոխությունը դարձել է հրամայական պահանջ:

Այսօր կրթության առաքելությունը համընդհանուր ներառական, սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծումն է, որը ենթադրում է բոլորի համար որակյալ կրթական ծառայությունների մատչելիություն և հասանելիություն: Դպրոցը կրթության ոլորտում շեշտը դնելու է կարողունակությունների վրա, ինչը թույլ է տալու ձևավորել ակտիվ, նախաձեռնող, բազմակարծիք, հանդուրժող, 21-րդ դարի կարողունակություններով օժտված քաղաքացի:

Զարգացման ծրագրի կրթության տեսլականը որակյալ կրթության ապահովումն է յուրաքանչյուր երեխայի համար՝ անկախ սոցիալական պայմաններից, հոգեբանական և ինտելեկտուալ առանձնահատկություններից, հետաքրքրություններից, հակումներից և կարողություններից:

Անհրաժեշտություն է առաջացել վերափոխելու նաև դպրոցի կառավարման սկզբունքները: Ներկայացվող զարգացման ծրագրի կազմման առանցքային սկզբունքը կառավարման մասնակցային համակարգի ներդրումն է, դպրոցի կառավարման գործում շահագրգիռ բոլոր մարմինների ներգրավումը:

Դպրոցում պետք է լինեն այնպիսի վարչական և մանակավարժական աշխատողներ , որոնք ունակ են ճիշտ ժամանակին նորը ընկալելու , ինքնակրթվելու և քայլելու ժամանակի պահանջներին համապատասխան :

Կրթության համակարգի բաղադրամասերն են՝ նպատակային-պլանային, ծրագրային-բովանդակային, կազմակերպչական-կառավարչական և վերահսկողական-արդյունքայինը:

Կառավարչական խնդիրները լուծման փուլերն են իրադրության ուսումնասիրումը, գործունեության պլանավորումը, ներգործությունների կոորդինացումը, վերահսկումը և արդյունքների գնահատումը, արդյունքների վերլուծությունը և մշակումը:

Դպրոցի կառավարման գործառույթներն են՝ կանխատեսման, հայտորոշման, հաղորդակցական, պլանավորման, կազմակերպման և վերահսկման:

Ծրագիրը կազմվել է՝ հաշվի է առնելով վերոնշյալ բաղադրամասերը, փուլերն ու գործառույթները: Հաշվի են առնվել նաև վերջին տարիների ներքին և արտաքին գնահատումների արդյունքները, վերլուծությունները, այնպես էլ վերջին ամիսներին դպրոցի առջև ծառայած նոր մարտահրավերները: Բարեփոխումների, արմատական փոփոխությունների կայացումը պայմանավորված է ոչ միայն լավ մշակված օրենսդրական պահանջներով, այլ նաև գիտակցված և հետևողական իրագործմամբ: Ուստի այս փուլում շատ կարևոր է դպրոցի տնօրինության, ուսուցչական համակազմի, ծնողական համայնքի, աշակերտական համակազմի միջև համագործակցային և մասնակցային միջավայրի ստեղծումն ու միասնական նպատակի իրագործումը:

Զարգացման ծրագրի վերաբերյալ հանդիպումները դպրոցի խորհրդակցական մարմիններում փաստում են, որ անելիքները շատ են և պահանջում են պատասխանատու մոտեցում և հստակ պլանավորում:

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N°1 հիմնական դպրոցը հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N°1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 23.01.2023 թվականին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնում:

Տարրական ընդհանուր I աստիճանի լիցենզիա N°0255՝ 200 աշակերտ:

Հիմնական ընդհանուր II աստիճանի լիցենզիա N°0249՝ 226 աշակերտ:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 06.09.2017թ., իսկ նրանում փոփոխությունները՝ 31.01.2020 թ. և 28.10.2020թ.

Դպրոցի շենքը տիպային է:

Հաստատությունն իր գործունեությունը ծավալում է՝ ղեկավարվելով

- <<Կրթության մասին>> ,
- <<Հանրակրթության մասին>> ,
- << Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին>>
- Աշխատանքային օրենսգրքով
- Դպրոցի կանոնադրությամբ և դրանում կատարված փոփոխություններով
- Օրինակելի իրավական ակտերի՝ հաստատության հաստատած տարբերակներով,
- Ներքին իրավական ակտերով ,
- Նորմատիվ այլ փաստաթղթերով

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է , իսկ նպատակը՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների և կրթական գործընթացներին առավելագույն մասնակցության ապահովումն է՝ յուրաքանչյուր սովորողի՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան:

Դպրոցում առկա են 18 կահավորված դասասենյակ, գրադարան-ընթերցասրահ, շախմատի դասասենյակ, ՆԶՊ դասասենյակ /զենքի պահեստ/, մեթոդական կաբինետներ, տեխնոլոգիայի դասասենյակ, ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա, ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, ԿԱՊԿ աշակերտների հարմարեցված սենյակ, 1 մարզադահլիճ, մարզահրապարակ (մինի ֆուտբոլի դաշտով), հանդիսությունների դահլիճ, ճաշարան (բուֆետ), բուժկետ, առանձնասենյակներ:

- Դպրոցի ընդհանուր աշխատակիցների թիվը 57 է, վարչական և մանկավարժական աշխատողների թիվը 41 է, որից 32՝ ուսուցիչ, 3 ուսուցիչ համատեղությամբ աշխատում է այլ ուսումնական հաստատություններում: 29 ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ, իսկ 3-ը՝ միջնակարգ մասնագիտական: Բոլորն էլ անցել են պարտադիր ատեստավորում : 5 ուսուցիչ կամավոր ատեստավորված է և ստանում է հավելավճար (որից 2-ը՝ մ/մ կրթությամբ), 2 ուսուցիչ ունի առաջին աստիճանի տարակարգ:
- 2023-2024 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցի սովորողների թիվը 395 է:
- Դպրոցում գործում է 4 մեթոդմիավորում՝ տարրական դասարանների, հումանիտար- հասարակագիտական, մաթեմատիկական և քնագիտական:
- Դպրոցում ուսուցանվում է 2 օտար լեզու՝ ռուսերեն և անգլերեն:

1.2 Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին:

Ներկայացված ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի հիման վրա և լիովին համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին: Հատկապես ուշադրության է արժանացել համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները:

1.3 Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:

Հաստատության գործունեությունը լիովին համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:

2023-2024 ուսումնական տարում դպրոցում կազմավորվել է 18 դասարան՝ 8 տարրական դպրոց, 10 միջին դպրոց.

N	Դասարան	Աշակերտ
1	I	40
2	II	37
3	III	48
4	IV	53
5	V	39
6	VI	45
7	VII	48
8	VIII	37
9	IX	49

Ուսուցիչների ընդհանուր թիվը և միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը

Ցուցանիշը	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Ուսուցիչների ընդհանուր թիվը	30	28	30	31	28
Ուսուցիչների միջին շաբաթական Ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	18,1	19,6	18,1	17,74	19,44

Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ

Ուսուցիչների տարիքային կազմ	Քանակ
Մինչև 30 տարեկան	1
31-ից 40 տարեկան	9
41-ից 50 տարեկան	5
51-ից 60 տարեկան	6
61 տարեկան և ավելի	13

Դպրոցի շենքային և նյութատեխնիկական բազայի վերաբերյալ տվյալներ
Դպրոցը երկհարկանի է ունի 4 մասնաշենք , ընդանուր մակերեսը կազմում է 3814,45 մ²

Առաջին հարկ		Երկրորդ հարկ	
Տարածքի անվանումը	Չափը՝մ ²	Տարածքի անվանումը	Չափը՝մ ²
Մուտքասրահ	245	Տնօրենի աշխատասենյակ	42,9
Հանդերձարան	11,8	Աշխատասենյակ 4	17,4
Ճաշարան	149,5	Ուսուցչանոց 2	11,2
Խոհանոց	8,5	Արմաթ լաբորատորիա	33,7
Սպորտդահլիճ	288	Համակարգչային սենյակ	36
Սպորտգույքի սենյակ	7,2	Հոգեբանի սենյակ	22,87
Մարզիչի սենյակ	6	Դասարան 9	58,1
Պահեստ	10	Դասարան 10	58,6
Դասասենյակ1	34,1	Դասարան 11	59,2
Դասասենյակ2	41,1	Դասարան12	59,3
Դասասենյակ3	41,1	Դասարան13	75

Դասասենյակ4	56,1	Դասարան14	75,5
Դասասենյակ5	56,5	Դասարան15	75,3
Դասասենյակ6	57,1	Դասարան16	97,3
Դասարան7	57,6	Դասարան17	98,4
Դասարան 8	57,9	Դասարան18	58
Գրադարան ընթերցասրահ	56,8	Պատշգամբ	18,4
Միջանցք1	190	Զենքի սենյակ	10

Միջանցք2	180	Սանհանգույց 7 երկտեղանոց	8,5
Միջանցք3	170	Սանհանգույց 8 երկտեղանոց	8,5
Սանհանգույց1 երկտեղանոց	8,5	Սանհանգույց 9 երկտեղանոց	8,5
Սանհանգույց2 երկտեղանոց	8,5	Սանհանգույց10 երկտեղանոց	8,5
Սանհանգույց3 երկտեղանոց	8,5	Սանհանգույց 11	5
Սանհանգույց4 երկտեղանոց	8,5	Սանհանգույց 12	5
Սանհանգույց5	4,25	Մուտքասրահ	183,4
Սանհանգույց6	4,25	Միջանցք 1	190
Սանհանգույց 7	1,6	Միջանցք 2	180
Սանհանգույց 8	1,6	Միջանցք 3	170
Ցնցուղարան տաք ջրով	1,5	Բուժկետ	11,2
Ցնցուղարան տաք ջրով	1,5		
Ուսուցչանոց 1	38,4		
Աշխատասենյակ1	11,5		
Աշխատասենյակ2	11,5		
Աշխատասենյակ3	11,5		
Շախմատի սենյակ	38,4		
Կենսաքիմիայի լաբորատորիա	58		
Ֆիզիկայի լաբորատորիա	38,4		

Գույք, սարքավորումներ	քանակ
Աշակերտական սեղան	272
Աշակերտական աթոռ	482
Ուսուցչանոցի կահույք	1
Տնօրենի սենյակի կահույք	1
Ուսուցչական սեղան	28
Գրատախտակ	29

Փափուկ կահույք 4 կտոր	2
Փափուկ աթոռ	69
Համակարգչային սեղան	16
Տարրական դաս. շախմատի գույք	12
Հագուստի պահարան	28
Թենիսի սեղան	1
Մետաղյա եռահարկ դարակ	3
Ճաշարանի աթոռ	96
Պահարան	47
Ուսումնական համակարգիչ	10
Աշխատանքային համակարգիչ	5
Պրոյեկտոր	1
Նոթբուք	1
Տպիչ սարքեր	2
Սկաներ տպիչ	1
Էլեկտրական ջեռոց	1
Ջրատաքացուցիչ	3
Խմորահունց	2
Էլեկտրական թեյնիկ	1
Սառնարան, սառցարան	2
Էլեկտրական սալոջախ	1
Լվացարան ծորակով սեղան	15

Դպրոցի բակ -1140 մ²

Դպրոցի սպորտհրապարակ- 3200 մ²

Դպրոցի կոյուղին – կենտրոնացված

Դպրոցի կանաչ տարածք – 1600 մ²

Դպրոցի ջրամատակարարումը – կենտրոնացված

Զեռուցումը – կենտրոնացված կաթսայատուն

	Համակարգչային դասասենյակ	քանակը
1.	Համակարգիչ	10 հատ
2.	Դյուրակիր համակարգիչ	1 հատ
3.	Պրոյեկտոր (1-ը անսարք)	2 հատ
	ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա	քանակը
1.	<<Այգեստան Զ>>մինի համակարգչի հավաքածու (մոնիտոր, ստեղնաշար , մկնիկ, երկարացման լար , ծրագրային ապահովում)	6 հատ
2.	Համակարգիչ, մոնիտոր, ստեղնաշար , մկնիկ, երկարացման լար	1 հատ
3.	CNC շաղափային հաստոց (հավաքածու)	1 հատ
4.	Եռաչափ տպիչ	1 հատ
5.	Փոշեկուլ	1 հատ
6.	Դարակով սեղաններ	6 հատ

7.	Գրասենյակային աթոռ	16 հատ
8.	Ռոբոտաշինության ուսումնական և ավտոմատացման հավաքածուներ	1 հատ
	Պատմության կաբինետ	
1.	Քարտեզներ	
2.	Պաստառներ	
3.	Գրքեր	
	ՆԶՊ կաբինետ և զենքի պահպանման սենյակ	
1.	Ուսումնական զենք	
2.	Հակագազեր	
3.	Պաստառներ	
4.		
	Մարզագույք	
1.	Այծիկ	1 հատ

2.	Կամրջակ	1 հատ
3.	Պլաստմասսե բուրգմեծ	10 հատ
4.	Շվեդական պատ	11 հատ
5.	Մարմնամարզական ներքնակ	4 հատ
6.	Մարզաձող	1 հատ
7.	Ցանցվոլեյբոլի	2 հատ
8.	Ձգման պարան	2 հատ
9.	Ֆուտբոլի գնդակ	4 հատ
10.	Բասկետբոլի գնդակ	2 հատ
11.	Վոլեյբոլի գնդակ	4 հատ
12.	Թենիսի սեղան	1
13.	Սպորտային պարկեր և թունելներ	2 հատ
14.	Փայտե նստարաններ	10
15.	Ծանրամարտի ձող իր կշռաքարերով	1

	Հոգեբանի սենյակ	
1.	Պաստառներ, քարտեր, խորանարդներ	
2.	Լեզո	
3.	Իսճանկար	
4.	Ջարգացնող խաղերի հավաքածուներ	

5.	Դոմինո
6.	Խաղալիքներ
7.	Գրքեր

Սանհանգույցները թեպեղ բարվոք վիճակում են , սակայն չկա հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցված սանհանգույց : Աշակերտական գույքը բարվոք վիճակում է և դասարանները ապահովված են աշակերտների տարիքին համապատասխան հարմարավետ գույքով: Նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերի վերլուծությամբ ստորև ներկայացված են առկա իրավիճակը և իրավիճակի բարելավման վերլուծությունները: Դպրոցը մրցունակ է, ունի բարձր վարկանիշ` շնորհիվ մանակավարժական որակյալ կադրերի , ավանդույթներ , որոնք արժանի են պահպանման և վերականգնման : Սակայն անհրաժեշտություն կա համագործակցությունների ընդլայնման , նոր գաղափարների , ստեղծագործ մոտեցումների, միջազգային և հանրապետական , մարզային և համայնքային իրադարձություններին , գիտաժողովներին , քննարկումներին, կրթական իրադարձություններին առավել ակտիվ մասնակցության:

Ուսուցիչների փորձառությունն ու գիտելիքներն անվիճելի առավելություններ են , սակայն նորարարական մոտեցումներ կիրառելը , ժամանակի պահանջներին հետևելը երբեմն դժվար է իրագործել:

Ստորև ներկայացվում է դպրոցի ներկազմակերպական կառուցվածքը.

1. Կառավարման խորհուրդ՝ բաղկացած 9 անդամներից
2. Առարկայական մեթոդական միավորումներ
ա/ հումանիտար և հասարակագիտական առարկաների
բ/ բնագիտական
գ/ մաթեմատիկական
գ/տարրական կրթության
3. Մանկավարժական խորհուրդ՝ բաղկացած 41 անդամից
4. Ծնողական խորհուրդ՝ բաղկացած 18 անդամից
5. Աշակերտական խորհուրդ՝ բաղկացած 16 անդամից
6. Տնօրեն-1
8. Տնօրենի տեղակալ-1
9. Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով համակարգող 1
10. Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող 1
11. Հոգեբան 1
12. Էլեկտրոնային դասավանդման և ապահովման մասնագետ -1

13. Ուսուցչի օգնական-3

14. Զինղեկ-1

15. Քաղաքաշահության շտաբի պետ – 0,5

16. Գրադարանավար-1

17. Լաբորանտ-2

Ուսումնաստանողակ անձնակազմ
Գլխավոր հաշվապահ-1
Գործավար-1,5
Տնտեսավար -1
Պահակ-3
Ցերեկային պահակ - 1
Հավաքարար - 5
Հնոցապան - 3

Դպրոցում գործող խորհրդակցական մարմինների հետ աշխատանքներն իրականացվում են հերթական և արտահերթ ռեժիմներով, մասնակցային ու հմագործակցային եղանակներով: Դպրոցում գործում են հետևյալ խորհրդակցական մարմինները.

1. Կառավարման խորհուրդ
2. Մանկավարժական խորհուրդ
3. Աշակերտական խորհուրդ
4. Ծնողական խորհուրդ
5. Առարկայական մասնախմբեր:

1. Կառավարման խորհրդի անդամները ակտիվ մասնակցություն ունեն ինչպես խորհրդակցական մարմնի լիազորություններից բխող աշխատանքների իրականացմանը, այնպես էլ՝ դպրոցի կազմակերպչական, կրթադաստիարակչական տարբեր միջոցառումներում: Կառավարման խորհրդի անդամները գործում են համաձայն խորհրդի աշխատակարգի և ժամանակացույցի: Պարբերաբար խորհրդի քննարկման են ներկայացվում ուսումնական հաստատությանն առնչվող կարևոր փաստաթղթեր, օրինակ՝ ֆինանսական հաշվետվություններ, ուսումնադաստիարակչական աշխատանքային պլաններ, հաշվետվություններ, մանկավարժահոգեբանական աջակցությունների կարիքի գնահատման արդյունքներ, ներքին կարգապահական կանոնները, ներքին և արտաքին գնահատման արդյունքները և այլն: Կառավարման խորհրդի նիստերն իրականացվում են և հեռավար և առկա ձևաչափերով:

2. Մանկավարժական խորհուրդը բաղկացած է ուսումնական հաստատության բոլոր՝ 41 մանկավարժական աշխատողներից: Մանկավարժական խորհուրդը քննարկում է օրենքով, դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված հարցերը՝ առավելապես հանրակրթության պետական չափորոշի պահանջների համաձայն, հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, սովորողների առողջության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցման պլանների, կրթության որակի ապահովման հետ կապված հարցերը: Մանկավարժական խորհրդի նիստերի մասին սահմանված ժամկետներում մասնակիցները ծանուցվում են, նիստերը բաց են խորհրդակցական ձայնի իրավունք ունեցողների համար:

3. Աշակերտական խորհուրդը կարևոր ու առանցքային դերակատար պետք է լինի ինչպես ժողովրդավարական արժեքների կրթման գործնական կիրառության համար, այնպես էլ որպես խորհրդակցական մարմին, որը ներգրավված է դպրոցական կյանքի կարևորագույն որոշումների ընդունմանը: Կարևոր է աշակերտական խորհրդի ձևավորման թափանցիկությունը, աշակերտական խորհրդի անդամների իրազեկվածությունն ու գրագիտությունը, հետաքրքրվածությունն ու մասնակցություն ունենալու կամքը: Այս ուղղությամբ իրականացվում են և նախատեսվում են իրականացնել գրույցներ, քննարկումներ, իրավական գրագիտության բարձրացման աշխատանքներ:

4. Ծնողական խորհուրդը ձևավորվում է սահմանված կարգով , գործուն մասնակցություն է ունենում դպրոցի կյանքում: Ըստ անհրաժեշտության հրավիրվում են դասարանական , համադպրոցական՝ ընդհանուր ծնողական խորհրդի նիստեր: Շատ կարևոր է առողջ համագործակացային մթնոլորտի ապահովումը: Կարևոր է նաև , որ ծնողխորհուրդը գիտակցի իր դերը, իմանա իր հնարավորությունները և պահանջողի դերից հանդես գա նաև աջակցողի, նախաձեռնողի ու մասնակցի դերում:

5. Դպրոցում գործում են չորս առարկայական մասնախմբեր: Բոլոր ուսուցիչներն ընդգրկված են առարկայական մասնախմբերում: Մասնախմբերի գործունեությունը շատ կարևոր է հատկապես կրթական բարեփոխումների այս ժամանակաշրջանում, քանի որ ուսուցիչներին առավել հաճախ է անհրաժեշտ լինում իրավական և մեթոդական աջակցություն ցույց տալ: Տնօրենությունը պարբերաբար իրազեկում է մասնախմբերի նախագահներին նորարարությունների մասին, խրախուսում է ուսուցիչների մասնակցությունն ու ակտիվությունը, մասնակցում է առարկայական մասնախմբերի նիստերին: Վեր հանված հարցերն ըստ հնարավորության լուծում են ստանում, ըստ անհրաժեշտության՝ քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերում:

Կրթական գործընթացի մասնակիցներն ունեն առաքելություն՝ ստեղծելու բարենպաստ կրթական միջավայր, համագործակցելու, դպրոցի առօրյան առավել հազեցած դարձնելու, նախաձեռնություններով հանդես գալու:

Դպրոցը բացի պարտադիր համագործակցություններից պետք է ձգտի ընդլայնել միջդպրոցական, ներհամայնքային, ներպետական ու միջազգային համագործակցությունները՝ հանուն կրթության բազմազանության ու որակի:

Այսպիսով կրթական գործունեության իրագործման ընթացքում սույն զարգացման ծրագրով նախատեսվում է.

- Ապահովել յուրաքանչյուր սովորողի մտավոր, ֆիզիկական և սոցիալական բնականոն զարգացումը
- Քայլեր ձեռնարկել արժանապատիվ, առանց բռնության ու անվտանգ միջավայրի ապահովման ուղղությամբ
- Յուրաքանչյուրի ընդունակություններին, կարողություններին առողջությանը համապատասխան՝ հարմարեցված միջավայրով ապահովում՝ ըստ հնարավորության
- Դաստիարակել ապագայի հստակ տեսլական ունեցող քաղաքացիներ: Կարևորել առողջ ապրելակերպի ու մասնագիտական կողմնորոշման ուղղված ձեռնարկումները

- Կարևորել մնայուն արժեքների գիտակցումը, ձևավորել հայրենասիրություն, հարգանք ազգային և համաշխարհային մշակութային արժեքների նկատմամբ
- Կարևորել ամուր ընտանիքների, հանդուրժողականության ու հարգանքի դերը

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորված գործողությունների ու ներդրումների միասնական համալիր է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների ու խնդիրների իրագործմանը, միջազգային ու ազգային կրթական պահանջների բավարարմանը: Բոլոր իրավիճակներում դպրոցը շարունակում է գնալ նախանշված նպատակների և խնդիրների ետևից:

2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերը

2.1 Հաստատության շենքային պայմանները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Ուսումնական դասասենյակները ապահովված են բնական լուսավորությամբ, սովորողների աշխատանքային տեղերն ապահովված են ձախակողմյան բնական լուսավորությամբ:</p> <p>Միջանցքները լայն և ընդարձակ են:</p> <p>Դպրոցի նոր՝ 4-րդ մասնաշենքում է գտնվում նորմատիվներին համապատասխանող մեկ մարզադահլիճ, առկա են մարզական գույքի պահման սենյակ, տղաների և աղջիկների հանդերձարաններ, սանհանգույցներ, տաք ջրով ցնցուղներ:</p> <p>Առկա է բարեկարգ, արհեստական խոտածածկույթով մինի ֆուտբոլի դաշտ:</p> <p>Առկա են 14 երկտեղանոց սանհանգույցներ, որոնցից երկուսը՝ մարզադահլիճում, իսկ մյուս երկուսը՝ հանդիսությունների դահլիճի նախասրահում: Առկա է աշխատակիցների համար առանձնացված սանհանգույց:</p> <p>Դպրոցն ունի գրադարան-ընթերցասրահ և գրապահոց:</p> <p>Կահավորված և բարեկարգ ուսուցչանոցի առկայությունը:</p> <p>Ուսուցչանոցն ապահովված է ինտերնետ կապով և երկու</p>	<p>Դպրոցը ջեռուցվում է ամբողջությամբ, սակայն ջեռուցման համակարգի հզորությունը չի համապատասխանում դպրոցի ջեռուցվող մակերսին:</p> <p>Դպրոցում չկան տեխնոլոգիայի համար կահավորված կաբինետ և արհեստանոց:</p> <p>Բոլոր դասասենյակներում չէ, որ պահպանվում է մեկ սովորողի համար սահմանված 2 մ² մակերեսի պահանջը:</p> <p>Հինգ դասասենյակների հատակը ենթակա է նորոգման: Քիմիայի, կենսաբանության և ֆիզիկայի լաբորատորիաները չունեն հագեցած նյութատեխնիկական բազա:</p> <p>Չկան համապատասխան դասասենյակներ նախատեսված երկարօրյա խմբերի և խմբակների համար:</p> <p>Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված սանհանգույցների բացակայությունը, երկրորդ հարկ տանող թեքահարթակների բացակայությունը:</p>

<p>համակարգչով:</p> <p>Դպրոցն ունի վերանորոգված և կահավորված հանդիսությունների դահլիճ՝ նախատեսված 203 հանդիսատեսի համար, հարդարանքի սենյակ և փոքրիկ պահեստ:</p> <p>Դպրոցն ունի ժամանակակից կահավորված ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա:</p> <p>Դպրոցն ապահովված է բարեկարգ և կահավորված ճաշարանով , որտեղ միանգամից սպասարկում են 96 երեխայի :</p> <p>Գործում է նաև բուֆետը:</p> <p>Առկա է փոքրիկ բուժկետ՝ ապահովված միայն խիստ անհրաժեշտ բժշկական պարագաներով և դեղորայքով:</p> <p>Դպրոցն ունի լրկալ ջեռուցման համակարգ, որն իրականացվում է կաթսայատան միջոցով: Ջեռուցման կաթսաները երկուսն են , որոնցից մեկը ապահովում է առաջին երեք մասնաշենքերի ջեռուցումը , իսկ երկրորդը ` 2011 թվականին կառուցված 4-րդ մասնաշենքը:</p> <p>Դպրոցի տարածքը կանաչապատ է , առկա են կանաչ գազոններ և ծաղկանոց:</p> <p>Դպրոցի բակը ունի ցանկապատ, ինչը թույլ է տալիս ապահովել սովորողների համար անվտանգ և ապահով միջավայր:</p>	<p>Բուժկետը չունի սանիտարական պահանջներին համապատասխան կահավորված բուժական նշանակության սարքեր:</p> <p>Դպրոցը չունի թաքստոց : Միակ նկուղային վայրը հետ երկրաշարժյան ժամանակների շինության նկուղն է 50 մ² տարածքով:</p> <p>Դպրոցի գրադարանը չունի ժամանակակից համակարգչային գրադարան – ընթերցասրահ:</p> <p>1-ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքերի հետնամուտքերի դռները փայտից են և արդեն ապահով չեն : Կարիք կա փոխարինելու մետաղապլաստե դռներով:</p> <p>Մինի ֆուտբոլի դաշտի հանդիսատեսի համար նախատեսված նստարանները ենթակա են վերանորոգման:</p> <p>Բակի սալիկների 20%-ը քայքայվել է և ենթակա է փոխարինելու նորով :</p> <p>Հաշվի առնելով սովորողների հակումներն ու նախասիրությունները, նկարչական և ձեռքի աշխատանքների նկատմամբ, անհրաժեշտություն է կահավորել համապատասխան սենյակներ :</p>
---	---

Ջեռուցվում է ամբողջ շենքը:

Դպրոցի բոլոր պատուհանները ջերմամեկուսիչ մետաղապլաստից են:

Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում (միայն ամռան ամիսներին է ջրամատակարարումը դառնում գրաֆիկով):

Գլխավոր մուտքի մոտ առկա է թեքահարթակ:

Դպրոցի բոլոր 4 մասնաշենքերն էլ ունեն երկուական ետնամուտքեր , ինչը ապահովում է սովորողների համար անվտան և ապահով միջավայր:

Հնարավորություններ	Վտանգներ
<p>Թույլ կողմերում ներկայացված բոլոր խնդիրներն իրագործելի են դպրոցի բյուջեն ճիշտ պլանավորելու դեպքում:</p> <p>Արտաբյուջետային միջոցների գոյացում:</p> <p>Ձեռնարկատիրական գործունեության ծավալում:</p> <p>Դպրոցի շրջանավարտների ակումբի ստեղծում և նրանց հնարավորությունների օգտագործում:</p> <p>Ծնողական խորհրդի միջոցով գործարար ծնողների ներգրավում և տեղեկացում հարազատ դպրոցի խնդիրների վերաբերյալ և նրանց օժանդակության ակնկալում :</p> <p>Սահմանել առաջնահերթությունները ճիշտ ուղղությամբ:</p>	<p>Երկրի տնտեսական վիճակի վատթարացում, համաճարակներ, պատերազմական իրավիճակ, արտագաղթ:</p> <p>Աշակերտների թվի չգրանցված աճ:</p> <p>Բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների ոչ արդյունավետ տնօրինում:</p>

2.2 Հաստատության նյութատեխնիկական բազան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցում կա 1 շարժական պրոյեկտոր, 1 դյուրակիր համակարգիչ և պլանշետներ, որոնք նախատեսված են հեռավար դասերի և դասասենյակներում S<S օգտագործմամբ դասերի իրականացման համար:</p> <p>Գործում է ԱՐՄԱԹ ինժեներական լաբորատորիա՝ հագեցած անհրաժեշտ սարքավորումներով և գույքով:</p> <p>Դպրոցում առկա է 2 բազմաֆունկցիոնալ տպող և տեսաձրող սարքեր, UPS սարքեր:</p> <p>Վարչական գործառնությունների և մանկավարժահոգեբանական աջակցության թիմի աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար առկա են համապատասխան համակարգիչներ և տեխնիկական միջոցներ:</p> <p>Գրադարանում կա 1921 գիրք՝ հիմնականում հայերեն և ռուսերեն լեզուներով, ուսուցչի ձեռնարկներ, ամսագրեր:</p> <p>Գրադարանի գրքերի հասանելիությունը աշակերտներին, հարմարավետ ընթերցասրահը:</p> <p>Դպրոցում առկա են 4 հեռուստացույցներ, որոնցից մեկը ապահովում է 4-րդ մասնաշենքի անվտանգության</p>	<p>Դպրոցը չունի ԱՄԱՐԹ դասասենյակ ,որը ապահովված լինի նոր սերնդի համակարգիչներով,պրոյեկտորով և էլեկտրոնային գրատախտակով :</p> <p>Գրադարան-ընթերցասրահը ապահովված չէ համակարգիչներով , հեռակառավարվող էկրանով, պրոյեկտորով՝ տեսադասեր իրականացնելու համար:</p> <p>Ժամանակակից կրթական կարիքների ապահովման նպատակով ուսումնամեթոդական նյութերի քանակը սակավ է /պաստառներ, քարտեզներ, մուլյաժներ և այլն/:</p> <p>Դպրոցն ունի ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության ժամանակակից լաբորատոր սարքավորումների, դիդակտիկ պարագաների, քիմիական նյութերի կարիք:</p> <p>Համակարգիչները բավարար չեն ինֆորմատիկայի դասերի և տեսադասերի կազմակերպման համար, քանի որ հնացել են :</p> <p>Դասավանդման գործընթացում S<S օգտագործմամբ դասերի իրականացումը պահանջ է, որն իրագործելու համար ցանկալի է յուրաքանչյուր դասարանում ապահովել մեկական համակարգիչ և պրոյեկտոր, դպրոցի ողջ տարածքը ապահովել</p>

<p>համակարգը, իսկ 3-ը տեղադրված են դարրական դասարանների դասասենյակներում :</p> <p>Դպրոցի 4-րդ մասնաշենքը ապահովված է անվտանգության տեսահամակարգով :</p> <p>Կոշտ գույքը գտնվում է լավ վիճակում : Գույքի քանակար բավարար է և համապատասխանում է աշակերտների տարիքային առանձնահատկություններին:</p> <p>Դասարաններում և ուսումնական սենյակներում առկա են պահարաններ:</p> <p>ԿԱՊԿ աշակերտների համար նախատեսված սենյակները հագեցած են համապատասխան գույքով՝ բազմոց, բազկաթոռներ, խաղասեղաններ, դիդակտիկ պարագաներ: Պատշաճ ձևով կահավորված է ուսուցչանոցը որտեղ բացի կոշտ և փափուկ գույքից առկա է նաև ինտերնետ կապը և 2 համակարգիչներ:</p> <p>Դպրոցի ճաշարանի և խոհանոցի ամբողջ գույքը նոր է. Առկա են ջրատաքացուցիչներ, սառնարաններ, վառարան, սալօջախ, կշեռքներ, աշակերտների համար լվացարաններ և ձեռքերի էլեկտրական չորացման սարքեր:</p> <p>Դասասենյակներն ապահովված են սովորողների թվին համապատասխան կախիչներով, նոր գրատախտակներով՝ կավճային և մագնիսական:</p> <p>Դպրոցի տարածքի գրեթե 20% ապահովված է ինտերնետ կապով /լարային կամ wi-fi/:</p>	<p>հզոր ինտերնետ կապով՝ հաշվի առնելով սովորողների համացանցից օգտվելու ապահովությունն ու անվտանգությունը:</p> <p>Դպրոցի մեթոդական կաբինետները հագեցված չեն ժամանակակից տեխնոլոգիաներով:</p> <p>Անհրաժեշտություն է տեխնոլոգիայի կահավորված կաբինետի և արհեստանոցի առկայությունը:</p> <p>Դպրոցի մնացած 80 % ապահովել ինտերնետ կապով:</p>
--	---

Դպրոցի 4-րդ մասնաշենքը ունի հանդերձարան , որը սպասարկում է հանդիսությունների դահլիճի այցելուներին:

Դպրոցի գույքը գտնվում է լավ վիճակում:

Մարզադահլիճը հագեցած է անհրաժեշտ սպորտային գույքով:

Հանդիսությունների դահլիճը ունի վարագույրներ և միմիանց կպած բազմատեղանոց փափուկ աթոռներ, հարդարանքի սենյակ և փոքրիկ պահեստ:

Առկա են համապատասխան քանակությամբ կրակմարիչներ:

Հնարավորություններ	Վտանգներ
<p>Առաջնահերթ է վարչատնտեսական համակարգողի կողմից բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը:</p> <p>Արտաբյուջետային միջոցների գոյացում:</p> <p>Ձեռնարկատիրական գործունեության ծավալում:</p> <p>Սահմանել առաջնահերթությունները ճիշտ ուղղությամբ:</p> <p>Նպատակահարմար է զարգացնել դպրոցի մանկավարժների կարողությունները դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու ուղղությամբ՝ դպրոցը նորագույն նյութատեխնիկական բազայով</p> <p>Զինելու համար:</p>	<p>Երկրի տնտեսական վիճակի վատթարացում, համաճարակներ, պատերազմական իրավիճակ, արտագաղթ:</p> <p>Աշակերտների և դասարանների թվի աճ չի գրանցվել:</p> <p>Բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների ոչ արդյունավետ տնօրինում:</p>

2.3 Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցի կառավարման կարևորագույն սկզբունք է համարվում կառավարման գործընթացի մասնակցային բնույթը:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1.Գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը խրախուսում է մասնակցային կառավարումն ուսումնական հաստատության խորհրդակցական մարմիններում:</p> <p>2.Դպրոցի բոլոր խորհրդակցական մարմինները ձևավորվում են օրենքով սահմանված կարգով, նիստերը գումարվում են կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում և դեպքերում, արձանագրվում սահմանված ժամկետներում:</p> <p>Կառավարման խորհուրդը հիմնականում գործում է իր լիազորությունների շրջանակում:</p> <p>3.Դպրոցի տնօրենը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները, ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական</p>	<p>Դպրոցի խորհրդի աշխատանքներում ԿԳՄՍ նախարարության և ՏԻՄ /մարզպետարանի ներկայացուցիչները ավելի պասիվ դերակատարում ունեն: Պատճառն այն է, որ նրանք ուղղակի նշանակված են, հստակորեն չգիտեն իրենց դերը, լիազորություններն ու պարտականությունները: Նրանց տեղեկացվածությունը, կրթության ոլորտի խնդիրների իմացությունը, ինչպես նաև իրավական գիտելիքները բավարար մակարդակի վրա չեն: Բացակայում են խորհուրդների անդամներին առաջադրման համար ներկայացվող չափանիշներ, նրանք հիմնականում կրթության ոլորտի ներկայացուցիչներ չեն, նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմներ առկա չեն:</p> <p>Դպրոցի խորհրդի անդամների հանդիպումները կրում են պարտադրված բնույթ:</p> <p>Խորհրդի անդամի գործառույթների վերաբերյալ իրազեկության , օրենսդրական փոփոխությունների մասին պակաս ինֆորմացված լինելը :</p>

աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները, ինչպես նաև ներքին և արտաքին գնահատման արդյունքները:

4.Դպրոցի մանկավարժական խորհուրդը կազմված է 41 մանկավարժներից: Մանկավարժական խորհուրդը քննարկում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսումնական պլանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը և տարեկան հաշվետվությունները: Քննարկում է հանրակրթության պետական չափորոշի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործմա հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան: Մանկավարժական խորհուրդը քննարկում և վեր է հանում առկա խնդիրները, առաջարկում դրանց լուծման ուղիներ: Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով ԿԱՊԿ սովորողների հետ տարվող աշխատանքները՝ ըստ անհրաժեշտության առաջարկում է վերանայել տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները:

Դպրոցում գործում է 4 առարկայական մեթոդական միավորումներ՝ տարրական դասարանների, հումանիտար և հասարակագիտական առարկաների, մաթեմատիկական և բնագիտական: Մեթոդական միավորումները՝ քննարկում են ՀՊԶ-ին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ԿԱՊԿ սովորողի

1. Աշակերտները լիովին չեն գիտակցում աշակերտական խորհրդի կարևորությունը, նրանք բավարար տեղեկացված չեն աշակերտական խորհրդի դերի, իրավունքների, լիազորությունների մասին:

Աշակերտների ներգրավվածության պակաս դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակմանը:

Ցածր է խորհրդակցական մարմինների նախաձեռնողականությունը և ինքնավարությունը:

Իրավական ակտերի փոփոխություններին, իրենց լիազորություններին, իրավունքներին ու պարտականություններին ոչ լիարժեք տիրապետելը:

Տեղեկատվական հարթակների բազմազանության մեջ ոչ ճիշտ կողմնորոշվելը:

Ցածր է համագործակցությունը թե՛ կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների միջև, թե՛ առանձին խորհրդակցական մարմինների միջև:

Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ:
2. Թերի է ծնողների գործուն մասնակցությունը մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին, ներհամայնքային միջոցառումներին: Անհրաժեշտ է խթանել ծնողների նախաձեռնողականությունը, քանի որ ծնողները թյուր կարծիք ունեն այն մասին , որ մասնակցել նշանակում է՝ պահանջել:

ԱՌԽՊ-ը, ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում, կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ:

1. Աշակերտական խորհրդում ընդգրկված է 16 աշակերտ :

Այն ձևավորվում է սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ: Աշակերտական խորհրդի հանձնախմբերը ձևավորվում են աշակերտների տարիքային առանձնահատկություններին, հետաքրքրություններին և կարողություններին համապատասխան: Աշակերտական խորհրդի և դպրոցի տնօրենության միջև ստեղծված է մասնակցայի մշակույթ, որը ապահովում է աշակերտական խորհրդի կողմից իրենց անմիջականորեն վերաբերվող հարցերի շուրջ բաց և համագործակցային քննարկումները: Դպրոցի տնօրենի անմիջական մասնակցությամբ սովորողների

3. Ուսուցիչների մասնակցությունը իրավանորմատիվային ակտերի նախագծման փուլում պասիվ է:

4. Կոլեգիալ կառավարման խորհուրդը չունի էական ազդեցություն կրթության որակի վրա:

նախաձեռնությունները քննարկվում և կյանքի են կոչվում:

2.Ծնողական խորհուրդում ընդգրկված է 18 ծնող, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է իրենց դասարանական ծնողական խորհրդի նախագահ: Ծնողական խորհուրդի և տնօրենի միջև հարաբերությունները հիմնված են փոխադարձ վստահության և համագործակցության վրա: Ծնողների ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին կազմակերպվում է մասնակցային մշակույթի սկզբունքներով: Ծնողական խորհուրդը մշտապես աջակցում է արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպմանը:

Հնարավորություններ	Վտանգներ
<p>ԿԳՄՍ նախարարության առկա մեխանիզմները և թափանցիկ աշխատելաճը հնարավորություն է տալիս դպրոցի կառավարման և կառավարման գործընթացների կարգավորմանն առնչվող օրենսդրական և իրավանորմատիվային ակտերի նախագծման փուլում ապահովել դպրոցի տնօրենի, ուսուցիչների և կառավարման այլ մարմինների ներկայացուցիչների լայն մասնակցությունը, ինչը թույլ է տալիս այդ գործընթացը դարձնել առավել մասնակցային:</p> <p>Դպրոցի տնօրենի անհատական որակները և մասնակցային ղեկավարման հմտությունները հնարավորություն են տալիս ձևավորել կառավարման մասնակցային մշակույթ, որը կապահովի արդյունավետ կառավարումը և դպրոցի կայուն զարգացումը:</p> <p>Կառավարման և խորհրդակցական մարմինների համար անցկացվող նպատակային վերապատրաստումները կարող են խթանել այդ մարմինների արդյունավետ գործունեությունը, նախաձեռնողականությունը և մոտիվացիան:</p>	<p>ՀՀ հանրակրթության ոլորտի տարբեր ժամանակահատվածներում ընդունված օրենքները և ենթաօրենսդրական ակտերը փոխհամաձայնեցման կարիք ունեն, երբեմն առկա են հակասություններ, որոնք կարող են ուղղակիորեն ազդել դպրոցի կառավարման վրա:</p> <p>Փոփոխված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ կրթական գործընթացի մասնակիցների ոչ պատշաճ և ժամանակին իրազեկում:</p> <p>Կառավարման և խորհրդակցական մարմինների անդամների պասիվություն և նախաձեռնողականության ցածր մակարդակ:</p>

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը : Դպրոցը գործուն մասնակցություն է ունենում համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության:</p> <p>Համայնքապետարանը ևս մասնակցում է դպրոցական կյանքին, ընթացք տալիս իր լիազորությունների շրջանակներում գտնվող հարցերին:</p> <p>Դպրոցը կատարում է լիազոր մարմնի՝ Լոռու մարզպետարանի՝ օրենքին չհակասող հանձնարարականները , մասնակցում քննարկումների, մասնակցում մարզային կրթական անցուդարձին:</p> <p>ՀՀ կրթության տեսչական մարմնի ստուգումների արդյունքների ուսումնասիրությունները նպաստում են դպրոցում առկա խնդիրների վերհանմանը, թերությունների շտկմանը:</p>	<p>Թույլ է համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ:</p> <p>Վերջին տարիներին, պայմանավորված համաճարակով և պատերազմական վիճակով, թուլացել է համագործակցությունը տարբեր ՀԿ-ների հետ:</p> <p>Նվազել են մշակույթի գործիչների, մտավորականների, զինվորականների , սպորտսմենների այցելությունները դպրոց:</p> <p>Թեև դպրոցում իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ, հիմնական դպրոցն ավարտող սովորողները դեռևս դժվարանում են կատարել ապագա մասնագիտության և ավագ դպրոցի հոսքերի ճիշտ ընտրություն:</p> <p>Ինտերնետ հասանելիության խնդիրները դպրոցում խանգարում են առավել շատ առցանց խորհրդատվությունների մասնակցել :</p> <p>Դպրոցի համագործակցության ընդլայնման անհրաժեշտու-</p>

<p>Ուսուցիչներն ու տնօրինությունը ընդգրկվում է ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին: Շարունակվում է ուսուցիչների մասնակցությունը նոր չափորոշչային պահանջների ներդրման վերաբերյալ վերապատրաստումներին:</p> <p>Արդյունավետ համագործակցություն է ընթանում Գնահատման Թեստավորման Կենտրոնի հետ՝ հատկապես քննական գործընթացների պատշաճ կազմակերպման և իրականացման շուրջ:</p> <p>Դպրոցը համագործակցում է Վանաձորի պետական համալսարանի հետ, և մեր աշակերտները ակտիվ մասնակցություն են ունենում նրանց կողմից անցկացվող մրցույթներին և օլիմպիադաներին:</p> <p>Դպրոցը համագործակցում է ՀՀ Ֆուտբոլի Ֆեդերացիայի հետ , որը համագործակցելով Սպիտակի համայնքապետարանի հետ, մեր դպրոցի համար կառուցել է մինի ֆուտբոլի արհեստական խոտածածկույթով ժամանակակից դաշտ:</p> <p>Դպրոցը մշտապես ակտիվ համագործակցում է ԿԳՄՍ նախարարության, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամի, ԱՅԲ հիմնադրամի, ԱԻՆ-ի հետ,</p>	<p>թյունը հանրապետական, մարզային, ներհամայնքային դպրոցների հետ:</p>
---	---

մասնակցություն է ունենում նրանց կողմից իրականացվող ծրագրերին, մրցույթներին, աշխատանքներին : Դպրոցը համագործակցում է նաև այլ ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, մշակութային օջախների հետ:

ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով դպրոցում իրականացվում է տարրական դասարանների «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որտեղ որպես աշխատակից ներներգրավված են դպրոցի ծնողները: Ծրագրի շրջանակներում ծնողական համայնքը իր ֆինանսական ներդրումն է ցուցաբերում սովորողներին լրացուցիչ սննդի տրամադրման համար:

Ծնողները մշտապես ակտիվ մասնակցություն են ցուցաբերում իրականացվող արտադպրոցական աշխատանքներին՝ ճանաչողական էքսկուրսիաներ, արշավներ, այցելություններ մշակութային կենտրոններ:

2.4 Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Հնարավորություններ	Վտանգներ
<p>Դպրոցի հոգեբանի և դասղեկների միջոցով հնարավոր է ապահովել համագործակցություն տարբեր ՀԿ-ների հետ, կազմակերպել մշակույթի գործիչների, մտավորականների, զինվերականների, սպորտսմենների այցելությունները դպրոց:</p> <p>Իրավական ակտերի փոփոխության շնորհիվ երկարօրյա ուսուցումը դառնում է պարտադիր ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած սովորողների համար, իսկ հետագայում ծնողի դիմումի հիման վրա իրականացվող երկարօրյա խմբեր կարող են ձևավորվել նաև մյուս սովորողների համար՝ վճարովի հիմունքներով, որը հնարավորություն կընձեռի սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով:</p>	<p>Հնարավոր արտակարգ իրավիճակները և համաճարակը: Սոցիալականան անբարենպաստ պայմաններ:</p> <p>Ծնողների վճարունակության ցածր մակարդակ:</p>

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակներ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցում դասավանդում են մեծ մասամբ աշակերտակենտրոն , մասնակցային , ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ:</p> <p>Դպրոցի մանկավարժները մշտապես մասնակցում են մասնագիտական որակների զարգացման միջոցառումների՝ ինքնակրթվելով և ինքնազարգանալով:</p> <p>Դպրոցի 32 մանկավարժներից 29-ը ունեն բարձրագույն կրթություն , իսկ 3-ը միջնակարգ մասնագիտական : Նրանցից 5-ը անցել են կամավոր ատեստավորում և ստանում են հավելավճար(2-ը մ/մ կրթությամբ), երկուսն ունեն ուսուցիչների որակավորման 1-ին աստիճանի տարրակարգ:</p> <p>Մարզային և հանրապետական օլիմպիադաներում ունենք նշանակալի մասնակցություն և գրանցված արդյունք (հանրապետական2-րդ կարգի դիպլոմ և գովասանագրեր):</p> <p>Դպրոցում կա մեկ վերապատրաստող ուսուցիչ :</p> <p>Դպրոցում կան ուսուցիչներ ովքեր մասնակցություն են ունենում սեմինարների , դասընթացների , ծանոթանում կրթության ոլորտի առաջավոր փորձին:</p>	<p>Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն անհամաչափ է:</p> <p>Ուսուցիչների միջին տարիքային ցուցանիշների բարձր լինելը, ինչը խոչնդոտում է հատկապես SCS հմտությունների կիրառմանը:</p> <p>Շարունակական ոլորտների փոփոխությունների վերաբերյալ իրազեկության պակասը:</p> <p>Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս , նախագծերը քննարկան ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն:</p> <p>Անհրաժեշտ է մշակել խրախուսման հստակ չափանիշներ , որոնք կշահագրգռեն ուսուցչին ունենալ առարկայական օլիմպիադաներում հաղթող , կրթական ծրագրերում ակտիվ մասնակցություն ունեցող սաներ:</p> <p>Խրախուսում սահմանել նաև ինքնակրթությամբ և ինքնազարգացման հնարավորություններն օգտագործող ուսուցիչների համար:</p>
<p>Ուսուցիչների մեծամասնությունը հմտորեն կիրառում է MS TEAMS հեռավար հարթակն իր բոլոր հնարավորություններով, հմտորեն օգտվում են առկա էլեկտրոնային կրթական ռեսուրսներից:</p> <p>Տնօրինության կողմից խրախուսվում է կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցությունը,</p>	

ուսուցիչները պարբերաբար իրազեկվում են գործընթացի վերաբերյալ հայտարարություններին: Նոր ուսումնական տարում կամավոր ատեստավորման համար գրանցված երեք ուսուցիչ կա դպրոցում:

Կա համագործակցային միջավայր , որի ապացույցն են ինտեգրված դասերը, միջառարկայական կապերի վրա հիմնված համակցված դասերը , համատեղ միջոցառումները , փոխադարձ դասալսումները:

Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում ` և էլեկտրոնային , լրացվում են սահմանված կարգերի համաձայն : Դպրոցի տնօրինությունը պարբերաբար իրականացնում է խորհրդատվական և վերահսկողական աշխատանքներ նշված ուղղությամբ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների և ներդպրոցական վերահսկողության պլանների առկայություն , պարբերական մշտադիտարկումներ և արդյունքների վերլուծություններ:

Հնարավորություններ	Վտանգներ
<p>Ակտիվ ուսուցիչների մասնագիտական որակները, նախաձեռնողականությունը հնարավորություն է տալիս օգտագործելու նրանց կարողունակությունները մանկավարժական համայնքի համաչափ զարգացումը խթանելու համար՝ միջանձնային փոխհարաբերությունների և փոխգործակցության գործընթացի միջոցով:</p>	<p>Անվստահություն սեփական ուժերի հանդեպ: Կամավոր ատեստավորումը չհաղթահարած ուսուցիչների վերապատրաստում և հաջորդ տարվա պարտադիր մասնակցության պահանջ: Տարակարգի շնորհման գործընթացի համար ներկայացվող փաթեթի ծավալը և ժամանակատար լինելը: Կազմակերպվող վերապատրաստումները հաճախ կազմակերպվում են համայնքից դուրս, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ մանկավարժների մասնակցության համար՝ ընտանեկան և սոցիալական պատճառներով:</p>

2.6 Օգտագործվող SՀS և կրթական այլ տեխնոլոգիաներ և նորարարություններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Շարունակական աշխատանք է ընթանում ավանդական մեթոդների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ նոր մոտեցումների ներդրման, SՀS գործիքների իմացության կատարելագործման ուղղությամբ:</p> <p>Ուսուցիչներն իրազեկված են Հայկական կրթական միջավայր, Պաշարների շտեմարան կայքերի մասին:</p> <p>Տնօրինության առաջարկով դպրոցի ուսուցիչները գրանցվել են «Աշխարհացույց» կրթական հարթակում՝ ինչը հնարավորություն կտա ընդլայնել ինտերակտիվ կրթության իրականացումը:</p> <p>Սահմանված ժամկետներում իրականացվում են աշխատանքները դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում: Առարկան դասավանդող ուսուցիչները պատշաճ վարում են էլեկտրոնային դասամատյանները, ինչը վերահսկվում է դպրոցի տնօրենի և տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի կողմից՝ իրենց վերապահված գործառնությունների շրջանակում:</p>	<p>Դպրոցի մանկավարժական անձնակազմի մոտ 40%-ը դեռևս դժվարանում է կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական նպատակներով:</p> <p>Համակարգիչները թեև բավարար են, սակայն մեծ մասը հին են և ինֆորմատիկայի դասերի և տեսադասերի կազմակերպման համար դժվարություններ են առաջացնում:</p> <p>Լաբորոտոր նյութերի բացակայության պայմաններում պատրաստի ցուցադրությունների, գործնական աշխատանքների առցանց ռեսուրսները չօգտագործելը:</p> <p>Նախատեսվում է 2-րդ, 5-րդ և 7-րդ դասասենյակներն ապահովել շարժական ինտերնետ կապով և համակարգիչներով, իսկ հնարավորության դեպքում դպրոցն ամբողջությամբ ապահովել ցանցային ինտերնետով:</p>

Դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում մշտապես կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ. Տեսադասերի կազմակերպում, ֆիլմերի դիտում, վիրտուալ լաբորատորիաների կիրառում, վիկտորինաների, ինտելեկտուալ զարգացնող խաղերի կազմակերպում:

S<S տեխնոլոգիաները դասապրոցեսի ընթացքում կիրառվում են նաև միավորա- յին և ձևավորող գնահատում իրականացնելու նպատակով:

Դպրոցի մանկավարժների մեծամասնությունը հմտորեն կարողանում են օգտագործել MS Teams, Google Classroom հեռավար հարթակները:

Յուրաքանչյուր ամսվա համար կազմվում է համակարգչային դասասեսնյակներում իրականացվող դասերի գրաֆիկ, ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալի կողմից վերահսկվում է ուսումնական պրոցեսում S<S նպատակային օգտագործումը:

Դպրոցի ողջ փաստաթղթաշրջանառությունը, հաշվապահական հաշվառման վարումը /ՀԾ/ և ֆինանսական հաշվետվությունների կազմումը, գրադարանի դասագրքերի ֆոնդի հաշվառումը և վարումը իրականացվում է էլեկտրոնային

Եղանակով:

Դպրոցը մեծապես ուշադրության կենտրոնում է պահում համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների ապահով և անվտանգ օգտագործումը, մշտապես կարևորելով սովորողների և աշխատակիցների մեդիագրագիտությունը:

Հնարավորություններ	Վտանգներ
<p>Ներկայացված բոլոր խնդիրներն իրագործելի են դպրոցի բյուջեն ճիշտ պլանավորելու դեպքում:</p> <p>Արտաբյուջետային միջոցների գոյացում:</p> <p>Ձեռնարկատիրական գործունեության ծավալում:</p>	<p>Ցածր աշխատավարձը լրջագույն խնդիր է, որ ետ է պահում ուսուցիչներին նորարարությունից:</p> <p>Ուսուցիչների որոշ մասը ՏՀՏ-ի կիրառումը համարում է հավելյալ աշխատանք, ծանրաբեռնվածություն, որի համար նրանք նաև չեն վճարվում:</p> <p>Բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների ոչ արդյունավետ տնօրինում:</p>

2.7 Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Կրթության որակը ոչ միայն գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեհամակարգի համապատասխանությունն է հանրակրթական պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին, այլև ուսումնական հաստատության արդյունավետ գործունեությունը և յուրաքանչյուր մանկավարժի և վարչական աշխատողի ներդրումը կրթության ապահովման գործում:

Կրթության որակի ապահովման համար անհաժեշտ է մանկավարժների մասնագիտական որակական չափանիշների բարձրացման ապահովում և կրթության արդյունքի անաչառ գնահատման մեխանիզմների ներդրում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցում իրականացվում է չափորոշչային կրթություն:</p> <p>2022-թ-ից դպրոցի բոլոր ուսուցիչները առարկայական թեմատիկ պլանավորումներում սահմանել են թեմաների ուսուցման նպատակներն ու վերջնարդյունքները, ինչը մեկ քայլ առաջ է դեպի նոր չափորոշչային պահանջների ներդրումը:</p> <p>Դպրոցը որդեգրել է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովումը:</p> <p>Դպրոցում բարձր հիմքերի վրա է դրված նախագծային աշխատանքների իրականացումը, ինչի մասին փաստում է</p>	<p>Չնայած ձեռնարկված միջոցառումներին կրթության որակի խնդիրը մնում է առաջնային:</p> <p>Ուսուցիչները բավարար տեղեկացված չեն ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան ուսուցման կազմակերպմանը:</p> <p>Վերջին 2 տարիների ընթացքում հերթական ատեստավորման ենթական ուսուցիչների անցած վերապատրաստումների արդյունավետության վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ վերապատրաստումները</p>

<p>կրթական տարբեր նախագծերում սովորողների ընդգրկվածության բարձր ցուցանիշը:</p> <p>Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է ոչ թե ըստ ուսուցիչների կարիքների ,այլ հաշվի առնելով ինչպես տվյալ առարկայի ծրագրային բարդությունը, նյութի ծավալը և հատկացված ժամաքանակը , այնպես էլ սովորողների նախասիրությունները , հակումները և համայնքի կարիքները: /գրավոր, բանավոր, ընթերցանության տեխնիկայի ստուգում/, դասարանները, ուսումնական առարկաները ընտրվում են սահմանված նպատակի համաձայն:</p> <p>Տարածքային և մարզային օլիմպիադաներում բարձր ցուցանիշների արձանագրումը: Հանրապետական օլիմպիադայի մասնակիցների առկայություն:</p>	<p>էական ազդեցություն չեն ունենում կրթության որակի վրա:</p>
--	---

Հնարավորություններ	Վտանգներ
--------------------	----------


<p>Դպրոցում կան բավականաչափ հմուտ և փորձառու ուսուցիչներ, որոնց նախաձեռնողականությամբ դպրոցում հնարավոր կլինի ստեղծել մեթոդական խորհուրդ, որը հիմնված կլինի յուրաքանչյուր մանկավարժի ընդգծված կարողունակությունների վրա և կձևավորի փոխօգնության և համագործակցության մթնոլորտ:</p> <p>Անձնակազմի խրախուսման և արժևորման համակարգի ներդրում: Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը հնարավորություն ունի ազատ ընտրելու վերապատրաստում իրականացնող կազմակերպությունը, ինչը հնարավորություն է տալիս ընտրել ոլորտի լավագույն մասնագետներին:</p>	<p>Հնարավոր պատերազմական և արտակարգ իրավիճակները, համաճարակը:</p> <p>Նոր չափորոշիչների և ծրագրերի ներդրումը առաջացրել է հավելյալ խնդիրներ, ինչը ավելի է դժվարացնելու կրթության որակի ապահովումը:</p> <p>Նոր ՀՊԶ-ի ներդրման ուղղությամբ իրականացված վերապատրաստումները արդյունավետ և նպատակային չէին, արդյունքում ուսուցիչները պատրաստ չեն նոր ՀՊԶ-ի ներդրմանը: Ներդրվող առարկայական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա կազմված դասագրքերի և ուսումնական ձեռնարկների կիրառումը հավելյալ ծանրաբեռնվածություն է առաջացնելու ուսուցիչների համար:</p>

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դպրոցում գնալով ավելանում է միջակայությունը: Ուսման որակի անկումը 2019-2020 և 2020-2021 ուսումնական տարիներին պայմանավորված է 2020թ-ից ի վեր երկրում տիրող համաճարակով և երկրի պատերազմական իրավիճակով: 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ հասնել կրթության որակի բարելավման, սակայն նախորդ երկու ուսումնական տարիների բացթողումները թողնում էին էական ազդեցություն և արտացոլվեցին 2022-2023 ուսումնական տարվա կրթության որակի վրա:



Սովորողների թիվը և առաջադիմությունը վերջին հինգ տարիներին

Ուստարի	Սովորողների թիվ	ԿԱՊԿՈւ սովորողների թիվ	Գերազանց	Լավ	Բավարար	Որակ %
2018-2019	394	4	85	103	206	47,7
2019-2020	394	5	102	113	179	54,56
2020-2021	411	8	47	193	171	58,4
2021-2022	418	4	81	114	223	46,65
2022-2023	397	5	94	96	197	49

Սովորողների թիվը



Կրթության որակի ցուցանիշներ



Մարզային, հանրապետական, օլիմպիադաներում ու մարզական, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
2		
Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը	14	7
Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը	3	5
Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը	3	5
Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը	3	5
Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում մրցույթների մասնակիցների թիվը	20	25

<p>վության, կոնֆլիկտների հաղթահարման, հույզերի կառավարման հմտությունների զարգացմանը:</p> <p>Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը կազմելիս առանձնահատուկ նշանակություն է տրվում սովորողների մոտ վնասակար սովորությունների կանխարգելմանն ուղղված և առողջ ապրելակերպ ձևավորելու աշխատանքների իրականացմանը:</p> <p>Անցանկալի, հակահրավական և հակասոցիալական վարք ցուցաբերող սովորողների սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված միջամտության ուղղությամբ դպրոցը համագործակցում է տարբեր կառույցների հետ, ամրապնդում դպրոց-ընտանիք-համայնք կապը:</p> <p>Սովորողների վարքի, կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների պահպանման ուղղությամբ աշխատանքների կազմակերպման հարցում մեծ ներգրավվածություն ունի դպրոցի աշակերտական խորհուրդը:</p>	<p>իրազեկվածության ցածր մակարդակ, խնդիրները կանխարգելելու և ճիշտ լուծելու կարողությունների պակաս:</p>
---	---

<p>Դպրոցում առանձնահատուկ կարևորվում է ներքին կարգապահական կանոնների, սովորողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության և պահպանման ապահովումը /սեմինար-քննարկումներ, բանավեճեր, իրազեկման աշխատանքներ/: Համընդհանուր մոտեցում է ցուցաբերվում սովորողներին ազգային գաղափարներով տոգորելու, փողոցային բարքերի դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով՝ պատմավեպերի ընթերցանությունների, գրական երեկոների ու կոլեկտիվ քննարկումների կազմակերպում:</p>	
---	--

Հնարավորություններ	Վտանգներ
<p>Խորհրդակցական մարմինների, դպրոցի անձնակազմի և համայնքի հետ համատեղ քննարկումների միջոցով դպրոցը դարձնել ավելի ներառական:</p> <p>Հաշմանդամություն ունեցող և ԿԱՊԿ երեխաների ծնողների կամ խնամակալների կարողությունների զարգացում:</p>	<p>Դժվար դաստիարակվող աշակերտների՝ նոր կոլեկտիվ մուտք գործելու հետ կապված ռիսկեր:</p> <p>Ծնողի անհարկի, կոպիտ միջամտություններից բխող ռիսկեր:</p>

